Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԵՏ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան – 2 (Աջափնյակ, Դավթաշեն, Մալաթիա Սեբաստիա) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 - 30.06.2026թթ |
| Ներկայացման օր | 02.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br><br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:30:21 AMT

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 150 շահառուի Երևանի Աջափնյակ, Դավթաշեն և Մալաթիա-Սեբաստիա համայնքներում: Սոցիալական աշխատողներիի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է՝ 29 դեպքի վարում
  - ✓ Վերափաստագրման գործընթացի կազմակերպում ընտանեկան նպաստ համակարգում-25
  - ✓ Աջակցող միջոցի ձեռքբերման կազմակերպում - 3
  - ✓ ԱՖԳ համակարգում գրանցում և ֆունկցոնալիության գնահատման կազմակերպում– 1

  Կենցաղային թափոնների վարձավճարների զրոյացման նպատակով արտոնության կիրառման համար վարչական շրջանների համապատասխան բաժիններ 15 շահառուի համար ներկայացվել են դիմումներ:

  1 շահառուի համար իրականացվել է Հանրային ծառայությունների համարանիշի մասին տեղեկանքի ձեռքբերման կազմակերպում.

  «Թիմ Տելեկոմ Արմենիա»-ից 5 շահառուի համար ձեռք է բերվել և ակտիվացվել նոր բջջային հեռախոսներ:

  1 շահառուի համար իրականացվել է «Օվիո» ինտերնետ կապի պայմանագրի լուծարման դիմում:

  1 շահառուի համար ՄՍԾ տարածքային կենտրոն իրականացվել է միջնորդում Ընտանիքի անապահովության միավորի չզրոյացման և արդեն իսկ սահմանված հետգանձումը չեղարկելու դիմում:

  1 շահառուի համար վարչական շրջանի համապատասխան բաժնից ձեռք է բերվել աղքահանության ու գույքաչափի պարտքի մասին տեղեկանք և իրականացվել վճարում:

  1 շահառուի համար վարչական շրջանից ձեռք է բերվել միայնակ ապրելու մասին տեղեկանք՝ ներկայացնելու ՄՍԾ տարածքային կենտրոն Ընտանիքի անապահովության համակարգում հաշվառվելու նպատակով:

  1 շահառուի համար ներկայացվել է դիմում՝ բանկի աշխատակցի տունայցը կազմակերպելու, տարեկան ներկայությունն ապահովելու նպատակով.

  1 շահառուի համար ներկայացվել է բանկային հավելվածում կարգավիճակի փոփոխության դիմում՝ նույնականացումը օնլայն տարբերակով անցնելու համար:

  1 շահառուի համար ներկայացվել է կենսաթոշակի վերահաշվարկի դիմում:

  2 շահառուի համար ներկայացվել է դիմում՝ կենսաթոշակի վկայականներում նոր բարձրացումների չափի մասին տեղեկատվությունն ամրագրելու մասին,

  1 շահառուի համար ՄՍԾՏԿ դիմում է ներկայացվել «Հույս տուն» հկ-ի չոր սննդի մատուցման ծառայությունից օգտվելու համար:

«Հուսո տուն» ՀԿ-ից 1 շահառուի համար ստացվել և հանձնվել է սննդային փաթեթ՝ շարունակական:
4 շահառուի համար տարածքային կենտրոնների անձնագրային բաժիններում ներկայացվել են դիմումներ՝ նոր անձնագրեր ձեռք բերելու համար :
4 շահառուների համար իրականացվել է բանկային ծրագրերի հավելվածների ակտիվացում, գրանցում, նույնականացում:
4 շահառուների համար իրականացվել է կոմունալ վարձերի վճարում:
5 շահառուների համար իրականացվել է կենսաթոշակների և նպաստների կանխիկացում շարունակական:
Եռամսյա հրատապ օգնության դիմում է ներկայացվել 2 շահառուի համար:
Ներկայացվել են կենսաթոշակի և Ընտանեկան նպաստի վճարող կազմակերպության փոփոխության 3 դիմում:
Կազմակերպվել է 5 ստացիոնար պայմաններում բուժում, 2 ՄՌՏ հետազոտության կազմակերպում:
7 շահառուների համար իրականացվել է տեղամասային պոլիկլինիկայում հսկող թերապևտի մոտ այցելության ժամի ամրագրում:
Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 76 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
6 շահառուի համար իրականացվել է «Արմեդ» համակարգում գրանցում և առողջության ապահովագրման համակարգի ակտիվացում:
2 շահառուի համար ձեռք է բերվել երկրից բացակայելու բացատրագիր և հանձնվել ՄԾ տարածքային կենտրոն :
1 շահառուի համար վարչական շրջանի սոցիալական բաժնից ձեռք է բերվել սննդային,տնտեսական և հիգիենիկ փաթեթներ և հանձնվել շահառուին :
9 շահառուի համար իրականացվել են գնումներ:
Իրականացվել է շահառուների 29 ուղեկցում տարբեր պոլիկլինիկաներ, վարչական շրջաններ, ՄԾ տարածքային կենտրոն, տարբեր ԲԿ-ներ, ֆինանսական կազմակերպություններ:
Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 16 շահառուների հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի նյարդային լարվածության թուլացմանը, հույզերի կառավարմանը, տագնապային իրավիճակների հաղթահարմանը:
Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպված թատերական միջոցառումներին մասնակցել են թվով 2 շահառուներ:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 150 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 76 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից,դեղատներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար և համավճարով դեղորայք:
    - 32 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով,
    - 5 շահառուի կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական),
    - 20 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա,
    - 6 շահառուի համար ստացվել է խորհրդատվություն և թերապևտի կողմից նշանակված դեղատոմսը հանձնվել է շահառուին,
    - 14 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում.
    - 10 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ շարունակական,

- 7 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք,
- 6 շահառուի կատարվել է դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգում,
- 4 շահառուի համար իրականացվել է վերքի շարունակական մշակում,
- 9 շահառուի համար կազմակերպվել է հետազոտությունների իրականացում տնային պայմաններում:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 150 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում նյութեր չեն տեղադրվել .

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Աջափնյակ,Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա համայնքները սպասարկող բոլոր աշխատակիցները մասնակցել են «Փախստականների և ընդհանուր համայնքների հզորացում.աշխատաշուկայում մրցունակության բարձրացում և ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար»թեմայով թրեյնինգին:

Հաշվետու ժամանակահատվածում Աջափնյակ,Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա համայնքները սպասարկող սոցիալական աշխատողները համայնքը սպասարկող

սոցիալական աշխատողը մասնակցել ՄԱԾՏԻ-ում կազմակերպված  կլոր սեղան քննարկմանը և Աջակցող ցանցի ֆորումին ։

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 150/148 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 131 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 143 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 13<br>Բ - 135 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 150 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 150 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 150 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 2 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 16 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07.2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)